

գթենք և ամէն ինչ Ս. Երուսաղէմի Աթոռին կը կապենք, որպէս զի այն տեղէն առնուի սուրբ մեռօնը» (7):

Յակոբ Կաթողիկոսին պատասխանը կը հասնի 1657 Նոյեմբեր 7ին. և կը կարգացուի պաշտօնապէս, յաջորդ օրը, Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ (8): Դըժբախտաբար, Երեմիա Չելեպիի օրագրութիւնը չի հաղորդեր մեզի այս նամակին բովանդակութիւնը: Կը թուի՝ թէ Եղիազարեանք զոհացում ստացած են: Այլուստ ծանօթ է թէ յետագային Մուղնեցիին կը հաշտուի Եղիազարի հետ (9):

Յաջորդ տարին, ուրիշ դէպք մը առիթ կ'ըլլայ նորանոր խռովութեանց: Ապրիլ ամսոյն, Թոմաս Վարդապետ, Կալանոսի աշակերտը, կը յաջողի տիրանալ Կ. Պոլսոյ և Երուսաղէմի Պատրիարքութեանց: Աշխարհական տեղապահները, մինչև Յուլիսի սկիզբը, ի զուր կը ջանան զինք գահնկէց ընել: Ի վերջոյ զինք կ'ամբաստա-

(7) Անդ, 219—220: Բաբգէ Ա. Կաթողիկոս, Պատմ. Կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս 1939 սիւն. 361—363:

(8) Անդ, 267: Թորոս Կաթողիկոս վախճանած էր նոյն տարին Ապրիլ 29ին (Բաբգէ Կաթողիկոս, Անդ 363):

(9) Դիւան Ա. Յակոբայ. Սիոն, Նոր Շրջան, է Տարի, 1933, Ապրիլ, թիւ 4, էջ 119—121: